ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1951 *Общественные науки*

Ռ. Ադամեանց

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ*

Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը մարքսիստական լեզվաբանության հանճարեղ ստեղծագործությունն է, ստալինյան լեզվաբանության հիմունքների հանրագիտարանը։

Ստեղծագործական մարքսիզմի այդ փայլուն երկը ուղիներ է բաց անում սովետական գիտության մի շարք բնագավառների հետագա զարգացման համար։ Հսկայական է այդ աշխատության նշանակությունը սովետական պատմագիտության և հնագիտության համար։

Սովետական հնագիտությունը պատմագիտության բաղկացուցիչ մասն է և զարգացել է նրան համընթաց։ Իր խոշոր նվաճումները սովետական հնագիտությունը ձեռք է բերել մարքս-լենինյան դիրքերից՝ բուրժուական հնագիտության մեջ տարածված ռասայականության, մարդկությունը պատմական և ոչ պատմական ժողովուրդների բաժանելու, կոսմոպոլիտիզմի և բուրժուական օբեկտիվիզմի դեմ մղվող պայքարում։

Բազմաթիվ ու բազմակողմանի են սովետական հնագիտության նվաճումները, որոնք ընդգրկում են պալեոլիթը, նեոլիթը, էնեոլիթը, բրոնզի կուլտուրան, Ուրարտուն, Սկյութա-սարմատական կուլտուրան, անտիկ շրջանը, միջին դարերը։ Այժմ մեծ մասշտաբներով կատարվում է կոմունիզմի մեծ կառուցումների ընդգրկած վայրերի հնագիտական ուսումնասիրությունը։ Աչքի է ընկնում ՍՍՌՄ-ում կատարվող հնագիտական ուսումնասիրությունների, ինչպես մասսայական բնույթը և ընդարձակ ծավալը, նույնպես և բազմաթիվ պրոբլեմների և լայնածավալ տերիտորիաների ընդգրկումը։

Սովետական հնագիտության մի շարք նվաճումներ, այսպես կոչված Մառի աշակերտները փորձում էին վերագրել Մառին. նրանք ջանում էին մեծ դեր վերագրել Մառին՝ հնագիտության մեջ բուրժուական տիրապետող տեսությունների դեմ մղված պայքարում։ Մինչդեռ սովետական հնագիտությունը այդ պայքարը մղել է մարքս-լենինյան տեսական հիմունքներով, իսկ Մառը հնագիտության հարցերում ևս խոշոր սխալներ է թույլ տվել։

Այսպես, միգրացիոն տեսության դեմ մղվող պայքարում գերագնահատվել է Մառի դերը և լուծության են մատնվել նրա սկզբունքային սխալները։ Անհրաժեշտ եմ համարում ինքնաքննադատության կարգով նշել, որ այդ սխալը թույլ եմ տվել և ինքս։

Մառը, երբ մշակում էր հաբեթական տեսությունը, ուլտրամիգրացիոնիստ էր, իսկ հետագայում աբսուրդի հասցնելով «ավտոխտոնության» իր տեսակետը, բոլորովին ժխտեց միգրացիաները և նրանց դերը։ Միգրացիոն տեսությունը բուրժուական գիտության մեջ մնում է տիրապետող և պայքարը նրա դեմ

* Զեկուցված է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի 1951 թ. հունիսի 22-ի նիստում։

չպետք է թուլացնել, միաժամանակ պետք է վերջնականապես ազատել սովետական հնագիտությունը Մառի սխալներից։

Մառի ստադիալ տեսությունն իր պայթյուններով՝ պատմագիտության, մանավանդ հնագիտության բնագավառում, արտահայտվում էր հնագիտական նյութի՝ կուլտուրայի կոնկրետ ուսումնասիրության փոխարինումով աբստրակտ և ունիվերսալ ստադիալ ընդհանրությունների «տեսությամբ», ուղեկցված կուլտուրական զարգացման հաջորդականությունը ժխտող կատաստրոֆներով, որոնցից հետո, օրինակ, հայոց պատմության մեջ, Մառի կարծիքով, ամեն ինչ նորից էր սկսվում։

Մառի ստադիալ տեսության տարածումը էթնոգոնիայի բնագավառի վրա լուրջ վնաս հասցրեց ժողովուրդների, մասնավորապես ռուս ժողովրդի առաջացման պրոբլեմի լուծմանը։ Ժողովուրդների առաջացման բազմադարյան երկարատև պրոցեսը փոխարինվում էր պայթյունների միջոցով, իրար փոխարինող նոր էթնոսների և նրանց նոր որակի լեզուների մասին մտահորինվածքներով, ըստ որում մերժվում և մի կողմ էր նետվում ժողովուրդների ու նրանց լեզուների ազգակցությունը, ուստի կարող էին իրար նախորդ ու հետնորդ դառնալ իրար հետ ոչ մի ազգակցություն չունեցող ժողովուրդներն ու լեզուները։

Ն. Յա. Մառը խոշոր պեղումներ է կատարել Անիում և նրա էնտուզիազմն ու եռանդը ցարիզմի ազգային ճնշման պայմաններում, այդ գործը գլուխ բերելու հարցում, ինչպես և պեղումների խոշոր արդյունքներն անժխտելի են. նա գրել է և հնագիտական տաղանդավոր աշխատություններ Անիի մասին, սակայն չի կարելի չնշել, որ Մառը պատշաճ ուշադրություն չի դարձրել պեղումների տեխնիկային, շերտագրության որոշմանը, ինչպես և հնագիտական առարկաների դասակարգման ու նրանց ուսումնասիրության վրա։

Հետագայում Մառը ոչ մարքսիստական դիրքերից հակադրվելով բուրժուական հնագիտության մեջ տիրապետող ինքնակա և ինքնանպատակ առարկայագիտությանն ու ֆորմալ տիպոլոգիական մեթոդին, ընդհանրապես անվանարկում էր հնագիտական առարկաների ամեն մի դասակարգություն և համեմատական ուսումնասիրություն, կպցնելով դրանց «բուրժուական առարկայագիտություն» և «հակագիտական ֆորմալ տիպոլոգիա» պիտակները։

Սովետական հնագիտությունը մեծ նշանակություն է տալիս հնագիտական նյութին, դիտելով այն որպես որոշակի էթնիկ կոլեկտիվի աշխարհագրորեն և ժամանակագրորեն որոշ շրջանի պատմական գործունեության արդյունք, հետևաբար և որպես պատմության ուսումնասիրության կարևորագույն նյութեղեն աղբյուր։

Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը ուսուցանում է մեզ ուսումնասիրել մարդկային հասարակության, նրա նյութական արտադրության, լեզվի կուլտուրայի, նաև նյութական կուլտուրայի կոնկրետ պատմությունը, բացահայտել նրանց զարգացման կոնկրետ օրինաչափություններն ու առանձնահատկությունները։ Ելնելով Ի. Վ. Ստալինի այս ցուցումից, սովետական հնագետները պետք է ուժեղացնեն պայքարը կուլտուրայի զարգացման օրինաչափությունների վերհանումն ու մեկնաբանությունը, ազդեցությունների ու փոխառությունների տեսությամբ նենգափոխելու դեմ, մի տեսություն, որն այնքան փարթամությամբ զարգացել է բուրժուական հնագիտության ու արվեստի պատմության մեջ, մանավանդ ԱՄՆ-ում երկրորդ

համաշխարհային պատերազմից հետո։ Խոսքը, ի հարկե, չի վերաբերում ընդհանրապես ազդեցություններին և փոխառություններին, որոնց նշանակությունը ոչ ոք չի ժխտում։ Պետք է ուժեղացնել պայքարը նաև ընդդեմ բուրժուական, մանավանդ ԱՄՆ-ի հնագիտության մեջ այժմ տարածված ագնոստիցիզմի դեմ, որն արդյունք է բուրժուական գիտության սահմանափակվածության և հանդում է պատմական զարգացման օրինաչափությունների ժխտմանը։

Ի. Վ. Ստալինը իր հռչակավոր աշխատության մեջ անդրադառնալով բազիսի և վերնաշենքի հարցին, ցույց տվեց, որ լեզուն վերնաշենք չէ։ Միաժամանակ նա ընդգծեց, որ ծնունդ առնելով բազիսից, վերնաշենքը ամենևին էլ պասիվորեն չի արտահայտում բազիսը, այլ «լույս աշխարհ գալով, նա դառնում է մեծագույն ակտիվ ուժ»։ Սովետական հնագետը Ի. Վ. Ստալինի այս թեզից պետք է համապատասխան եզրակացություններ հանի։ Հնագիտական նյութը միայն բազիսի կամ միայն վերնաշենքի բնագավառին վերաբերող նյութ չէ։ Հնագիտությունը ուսումնասիրում է և՛ արտադրողական ուժերի վիճակը պատմական տվյալ էտապում, և՛ նյութական արտադրության կազմակերպումն ու հասարակության տնտեսական սիստեմը կամ բազիսը կազմող արտադրական հարաբերությունները, ինչպես և հասարակության կենցաղը, սովորությունները, կուլտուրան, պաշտամունքը և այլն, որոնք վերնաշենքային երևույթներ են։ Հետևաբար այդ ամենը պետք է ուսումնասիրվի փոխադարձ կապակցության մեջ և փոխադարձ ազդեցությունների տեսանկյունից։ Այս դեպքում միայն հնագիտական նյութը լեզու և իմաստ կստանա որպես պատմության նյութեղեն աղբյուր։ Պարզաբանելով ,որ լեզուն վերնաշենք չէ և իրարից տարբեր դասակարգային լեզուներ չկան, Ի. Վ. Ստալինը նշում է, թե չպետք է շփոթել լեզուն և կուլտուրան։ Ի. Վ. Ստալինը զարգացնում է դասակարգային հասարակության մեջ դասակարգայնորեն իրարից տարբեր կուլտուրաների գոյության լենինյան թեզը։ Հնագետի, ճարտարապետի, արվեստի պատմաբանի համար լենինյան-ստալինյան այս թեզը ուղեցույց պետք է հանդիսանա տվյալ ժողովրդի անտոգոնիստական հասարակության շրջանի պատմության տարբեր էպոխաներում դասակարգայնորեն տարբեր երկու կուլտուրաների կոնկրետ պատկերը բացահայտելու գործում։ Այս առումով հայ ժողովրդի նյութական հուշարձանների (ճարտարապետական և գրական հուշարձանների) բաժանումը միայն աշխարհիկ և կրոնական պատկանելիության սկզբունքով պետք է պակասավոր և արատավոր համարել։

Հնագիտության առաջ ծառացած կարևոր հարց է նաև Ի. Վ. Ստալինի մատնանշած տարբեր ցեղերի ու ժողովուրդների կոնգլոմերատ ներկայացնող պետությունների, մեզ կովկասագետներիս համար, մանավանդ Կյուրոսի և Ալեքսանդր Մեծի կայսրությունների մեջ մտնող ցեղերի և ժողովուրդների կուլտուրաների ուսումնասիրության հարցը։ Այդ կուլտուրաները սովորաբար ուսումնասիրվում են որպես մի միասնական ամբողջականություն աքեմենյան և հելլենիստական կուլտուրա անվան տակ։ Մինչդեռ Ի. Վ. Ստալինը նշում է, որ այդ կայսրությունները «ներկայացնում էին իրենց կյանքով ապրող և իրենց լեզուներն ունեցող ցեղերի ու ժողովուրդների կոնգլոմերատ»։ Տնտեսության, կյանքի, կենցաղի, լեզվի ընդհանրության և միասնության բացակայության պայմաններում աքեմենյան կամ հելլենիստական ընդհանուր և միասնական կուլտուրայի առկայությունը մի առասպել է, որը դեռևս պահպանվում և նույնիսկ իշխող է հանդիսանում։ Իհարկե, որոշ ընդհանրություններ կան աքեմենյան,

մանավանդ «հելլենիստական» կոչվող կուլտուրայի մեջ, սակայն գիտության համար այդ ընդհանրություններից ավելի կարևոր է աքեմենյան և հունա-մակեդոնական պետությունների մեջ մտնող ցեղերի, մանավանդ ժողովուրդների, դրանց թվում և հայ ժողովրդի կուլտուրայի բնորոշ գծերի և առանձնահատկությունների ուսումնասիրությունը։

Նույն այս կապակցությամբ պետք է առաջ քաշել նաև կուլտուրաների խաչաձևումների հարցը։ «Հելլենիստական» կոչվող կուլտուրան համարվում է հին հունական և հին արևելյան կուլտուրաների խաչավորումով և սինթեզով ստեղծված նոր որակի կուլտուրա, որը չի նույնանում ոչ հին հունական, ոչ էլ հին արևելյան կուլտուրաների հետ՝ առանձին առանձին վերցրած։ Ինչպես հայտնի է, Ի. Վ. Ստալինը լեզուների խաչավորումը համարում է տևական մի պրոցես, որը շարունակվում է հարյուրավոր տարիներ, այնուհետև երկու լեզուների խաչավորումից ինչ որ նոր լեզու չի ստեղծվում. «Իրականում, խաչավորման դեպքում լեզուներից մեկը սովորաբար հաղթող է դուրս գալիս..., իսկ մյուս լեզուն աստիճանաբար կորցնում է իր որակը և աստիճանաբար մահանում»[1]։

Թվում է, թե այս թեզը նույնությամբ չի կարելի տարածել կուլտուրայի այլ և այլ բնագավառների վրա։ Միաժամանակ պետք է նշել, որ տարբեր կուլտուրաների սինթեզի հարցը մինչ այժմ պարզեցված ձևով է դրվել և այն պետք է վերանայվի Ի. Վ. Ստալինի ուսմունքի լույսի տակ։ Վերցնենք, օրինակ, նույն հելլենիստական կուլտուրան։ Հելլենիստական համարվող մի շարք երկրներում, օրինակ, Հունաստանում, Պերգամում, մասամբ Եգիպտոսում և Ասորիքում խաչավորված կուլտուրաներից գերակշիռ դեր է կատարել հունական կուլտուրան, իսկ մյուսներում, օրինակ, պարթևների մոտ, Հայաստանում և Վրաստանում գերակշռությունը պատկանել է տեղական կուլտուրային. ուրեմն չի կարելի խոսել հին արևելյան և հունական կուլտուրաների խաչավորման և սինթեզի հետևանքով բազմաթիվ երկրներում մի ինչ որ միասնական նոր կուլտուրայի առաջացման մասին, այլ խաչավորման երկարատև պրոցեսի հետևանքով մի քանի երկրների կուլտուրաները փոխակերպվել են և թևակոխել իրենց զարգացման այսպես կոչված «հելլենիստական» փուլը, որը որակապես տարբեր է նախորդ փուլերից։ Չի կարելի տարբեր երկրների կուլտուրաների միջև եղած ընդհանրությունը նրանց նույնություն համարել։ Միաժամանակ հավասարապես պետք է համարել, որ կուլտուրան ի տարբերություն լեզվի, ավելի է ենթակա խաչավորումների և տարբեր կուլտուրաների խաչավորման ժամանակ հնարավոր է ինչպես այս կամ այն կուլտուրայի գերակշռությունը, նույնիսկ հաղթող դուրս գալը, իսկ մյուսի յուրացվելը առաջինի կողմից, նույնպես և այդ տարբեր կուլտուրաների սինթեզի հետևանքով մի նոր կուլտուրայի առաջացումը։ Կուլտուրայի հասարակական ֆունկցիան այս բանին խիստ արգելքներ չի հարուցում, քանի որ կուլտուրան համաժողովրդական հաղորդակցության միջոց չէ, ուստի և կուլտուրաների խաչավորումը կարող է տեղի ունենալ համեմատաբար ավելի արագ։ Սակայն ավելի սովորական պետք է համարել այն դեպքերը, երբ խաչավորումների ժամանակ տվյալ ժողովրդի կուլտուրան պահպանում է իր ինքնատիպությունը և հարստանում է յուրացնելով և իր մեջ լուծելով մի կամ, նույնիսկ, մի քանի այլ կուլտուրաների շատ տարրեր։ Այս

[1] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը։ Հայպետհրատ, 1951, էջ 66։

հարցը արդեն առաջ է քաշվել և մեզ մոտ Երևանում և Մոսկվայում Գառնի ամրոցի պեղումներով հայտնաբերված նյութերի հիման վրա ու ստացել է սովետական գիտնականներից շատերի հավանությունը։

Ի. Վ. Ստալինը նշել է, որ լեզուների խաչավորումների ժամանակ «ոչ մի պայթյունի մասին խոսք լինել չի կարող», որ «պայթյունի միջոցով հին որակից նորին անցնելու օրենքը կիրառելի չէ ոչ միայն լեզվի զարգացման պատմության վերաբերմամբ. դա ոչ միշտ է կիրառելի նաև բազիսային կամ վերնաշենքային կարգի այլ հասարակական երևույթների վերաբերմամբ»[1]

Ելնելով այն թեզից, որ հասարակական երևույթները ծառայում են հասարակությանը և կուլտուրան էլ որպես հասարակական երևույթ դասակարգային հասարակության մեջ ծառայել է հասարակության տարբեր դասակարգերին՝ հնագետը կամ կուլտուրայի պատմությունը ուսումնասիրողը պարտավոր է ցույց տալ, թե կուլտուրան և նրա առանձին բնագավառները ինչի՞ արդյունք են, ինչպիսի դեր են խաղացել հասարակական կյանքում և ի՞նչ չափով ու ինչպե՞ս են սպասարկել հասարակության ու նրա տարբեր դասակարգերի պահանջներին։ Հակառակ դեպքում կուլտուրայի ուսումնասիրությունը կվերածվեր պոզիտիվ փաստագրության կամ բուրժուական օբեկտիվիզմի, որը փաստերի նկարագրությունից այն կողմը չի գնում։

Մի քանի խոսք հնագիտության մեթոդի մասին։ Դեռևս անցյալ դարի երկրորդ կեսում հնագիտական նյութի ուսումնասիրության հիմնական մեթոդը դարձավ ֆորմալ տիպոլոգիական մեթոդը։ Նշանավոր հնագետներ Մորտիլիեն, Մոնտելիուսը, ռուս գիտնական Բորոդցովը այդ մեթոդի կիրառումով տվեցին հնագիտական նյութի դասակարգման մի շարք արժեքավոր օրինակներ։ Սակայն բուրժուական գիտության մեջ տիրապետող դարձավ այն, որ հնագիտական առարկաները կտրվում էին իրենց պատմական սոցիալական միջավայրից և գերազանցապես ձևական հատկանիշների հիման վրա համեմատության դրվելով իրար հետ դասակարգվում էին ըստ նյութի (քար, կավ, բրոնզ, երկաթ և այլն), ըստ ձևի և ոճի (այս կամ այն ձևի և ոճի կացին, նիզակ, սուր, նկար կամ քանդակ)։ Արտաքին նմանությամբ դասդասում էին նաև առասպելները, սովորությունները ու ծեսերը, զանց առնելով հասարակական միջավայրը, ժամանակի և տարածության հանգամանքները։ Ստեղծվեց երկրից երկիր շրջող կուլտուրաների և առասպելների տեսությունը և սրանց մեջ սկսեցին դասդասել հնագիտական նյութն ու ժողովրդական առասպելները։ Ըստ զուտ ձևական հատկանիշների որոշվեցին հնագիտական կուլտուրաները կամ կուլտուրական շրջանները (Kulturkreise, Kulturbezirken), ինչպես դա արեցին Մենգինը և Գեորգ Վիլկեն։ Իրերին վերագրեցին նրանց զարգացման իմանենտ և ինքնակա օրենքներ և օրինաչափություններ, կազմվեցին հնագիտական նյութերի ծագումնաբանական և ազգակցական աղյուսակներ և սխեմաներ, առարկայի զարգացումը կտրվեց նրան ստեղծագործող ժողովրդի կամ էթնիկ կոլեկտիվի կոնկրետ պատմությունից, դարձավ ինքնանպատակ և այս եղանակով առաջացավ բուրժուական՝ պատմական կոնկրետությունից զուրկ և կոսմոպոլիտ առարկայագիտությունը։

Ն. Մարը ոչ-մարքսիստական դիրքերից մերժեց ոչ միայն բուրժուական առարկայագիտությունը, այլև Ռերագնոհատեց առհասարակ հնագիտական

[1] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Հայպետհրատ, 1951, էջ 63—64։

առարկաների ուսումնասիրությունն ու դասակարգումը և նշավակելով բոլորովին մի կողմ նետեց հնագիտական նյութի ուսումնասիրության համեմատական մեթոդը, առաջարկելով հնագիտության, լեզվի և մտածողության այսպես կոչված «եռակ» միասնության իր մեթոդը, որը հանգում էր, ավելի շուտ, լեզվի, մտածողության և հնագիտության տվյալների կամայական օգտագործմամբ հորինվող սխեմաների համար փաստարկներ ընտրելու արատավոր մեթոդին։

Սովետական հնագիտության մեթոդը ստեղծված է մարքս-լենինյան ուսմունքի հիման վրա։ Դա կոմպլեքս մեթոդն է, որը հնագիտական առարկան կամ հուշարձանը դիտում է որպես պատմական եղելության մասնավոր արտահայտություն, պատմության կոնկրետ պրոցեսի, հասարակական կոնկրետ միջավայրի մեջ, պատմության նյութեղեն ու հոգևոր եղելությունների ու փաստարկների ամբողջության ու նրանց հետ ունեցած բազմակողմանի կապակցությունների մեջ։ Հետևաբար, հնագիտական առարկայի ուսումնասիրությունը ինքնապատակ չէ, այլ մասնավոր փաստի՝ ընդհանուրի հետ ունեցած կապակցությունների բացահայտումը. ուստի և սովետական հնագիտության համար կարևոր են ոչ միայն «լավ» ու «վատ», շքեղ և կոպիտ, գեղեցիկ ու տգեղ, թանկարժեք նյութից կամ սոսկ քարից ու կավից պատրաստված իրերն ու առարկաները, այլև բոլոր այն հանգամանքները, որոնց մեջ նրանք գտնվում են, այլև տվյալ պատմական երևույթը կամ եղելությունը բացահայտող բոլոր մյուս աղբյուրների՝ գրավոր աղբյուրների, լեզվի, արվեստի, ազգագրության, բանահյուսության տվյալները, որոնց կոմպլեքսի մեջ հնագիտության առարկան լուսաբանություն ստանալով ինքը պերճախոս աղբյուր է դառնում։ Ֆորմալ համեմատական մեթոդը սովետական հնագետները մի կողմ չեն շպրտում, ինչպես այդ անում էր Մառը, այլ օգտվում են նրանից, որպես կոմպլեքս ուսումնասիրության մեթոդի բաղկացուցիչ մասից։

Ի. Վ. Ստալինի աշխատությամբ ջախջախվեցին համեմատական մեթոդի նկատմամբ ստեղծված արհամարհական վերաբերմունքը ինչպես և ձևի ու ոճի անարդարացի թերագնահատությունը։

Հնագիտության հետագա զարգացման համար խոշոր նշանակություն ունի նաև միասնական լեզվի կրախին վերաբերվող ստալինյան թեզը։

Սանժևին տված պատասխանի մեջ Ի. Վ. Ստալինը գրում է. «Լինում են և հակառակ պրոցեսներ, երբ զարգացման անհրաժեշտ տնտեսական պայմանների բացակայության հետևանքով, դեռևս աղգ չդարձած ժողովրդի (народность) միասնական լեզուն, այդ ժողովրդի պետական քայքայման հետևանքով կրախի է մատնվում, իսկ տեղական բարբառները, որոնք դեռևս չեն կարողացել միաձուլվել միասնական լեզվի մեջ,— վերակենդանանում են և սկիզբ դնում առանձին ինքնուրույն լեզուների գոյացմանը»։[1]

Այստեղից հնագետը պետք է եզրակացություններ անի իր բնագավառի համար, այն է՝ հնագիտական հուշարձաններն էլ կարող են երևան բերել ոչ միայն դեպի մերձեցումն ու ընդհանրությունը զարգանալու տենդենց, որի վրա մինչև այժմ մեծ ուշադրություն են դարձրել հնագետները, այլև, թերևս, հնագիտական կուլտուրան էլ միասնական լեզվի կրախը առաջացնող պայմաններում կարող է զարգանալ ընդհանուր կուլտուրայի կրախի և ընդհանուրից անջատվե-

[1] Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Հայպետհրատ, 1951, էջ 103։

լու, հեռանալու ուղղությամբ։ Հարցի այս կողմի վրա պետք է պատշաճ ուշադրություն դարձնել մանավանդ մեզ մոտ Հայաստանում, քանի որ հայ ժողովրդի պատմությունը միջին դարերում իր նորմալ ընթացքով չի զարգացել։

Ներկա փոքրիկ զեկուցմամբ մենք փորձեցինք Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության ուսումնասիրությունից անել մի քանի եզրակացություններ հնագիտության բնագավառի համար, սակայն եզրահանգումները, եթե նրանք ճիշտ են, միայն նախադրյալներ են գիտական ստեղծագործության համար. կարևորը նրանց ստեղծագործական կիրառումն է գիտության տվյալ բնագավառի զարգացման համար և գիտությունը հարստացնող նոր ուսումնասիրությունների երևան բերելը։

Սովետական Հայաստանի հնագետներն ու պատմաբանները արդեն որոշ քայլեր կատարել են այդ ուղղությամբ։ Խոշոր հաջողություն պետք է համարել հայ ժողովրդի պատմության դասագրքի հրատարակությունը 1951 թ. մարտ ապրիլ ամիսներին հայոց և ռուսաց լեզուներով։ Դասագիրքը լույս տեսավ Ի. Վ. Ստալինի հռչակավոր աշխատությունից հետո, և դա խոշոր նշանակություն ունեցավ նրա որակի տեսակետից։ Դասագրքում տրված է հայ ժողովրդի բազմադարյան պատմության գիտական շրջաբաժանումը և մի շարք հիմնական հարցերի ճիշտ լուծումը։ Դրան օգնել է նաև հնագիտական ուսումնասիրությունների նորագույն տվյալների օգտագործումը դասագրքում։ Որպես ամենահիմնական հարց, հիշատակենք Հայաստանում առաջին դարերում (մեր թվականությունից առաջ և հետո) ստրկատիրական հասարակության գոյության հարցի դրական լուծումը։

Առանձնապես պետք է նշել հայ ժողովրդի կազմավորման պրոբլեմի ուսումնասիրության բնագավառում պրոֆ. Ռ. Ղափանցյանի ձեռք բերած աչքի ընկնող հաջողությունները, որոնք համապատասխանում են Ի. Վ. Ստալինի աշխատության ոգուն։ Նույն այդ հարցը բավարար շարադրություն է ստացել հայ ժողովրդի պատմության դասագրքում։

1950 թ. լույս տեսավ ուրարտական բերդաքաղաք Կարմիր-Բլուրի 1939—1949 թ. թ. հնագիտական ուսումնասիրությունների արդյունքներին նվիրված հաշվետվությունը, որ կազմել է պեղումների ղեկավար Ռ. Բ. Պիոտրովսկին։ Այդ աշխատությունը կարևոր ներդրում է ոչ միայն ուրարտագիտության, այլև սովետական հնագիտության մեջ։

Ի. Վ. Ստալինի աշխատության լույսի տակ Հայաստանի հնագետները նոր ձևով են դնում այսպես կոչված հելլենիստական կուլտուրայի պրոբլեմը և այդ դարաշրջանի հայ կուլտուրայի պատմությունը դիտում են որպես ստրկատիրական հասարակության կուլտուրայի պատմություն։ Ջեռնարկված է հայ ժողովրդի և նրա կուլտուրայի պատմության հարցերում Ն. Մառի մտցրած շփոթի և սխալների վերացման գործը։ Միաժամանակ պայքար է տարվում հայ ժողովրդի կուլտուրայի մի շարք երևույթները միայն ազդեցություններով և փոխառություններով բացատրելու փորձերի դեմ։

Ի. Վ. Ստալինի աշխատությունը լույս տեսնելուց հետո Հայաստանի հնագետները սկսել են ընդհանրացնել Դվինի, Կարմիր-Բլուրի և Գառնիի հնագիտական ուսումնասիրությունների արդյունքները և աշխատություններ են պատրաստել հրատարակության համար։ Հրատարակության է պատրաստվում նաև Հայաստանի պալեոլիթի պրոբլեմին նվիրված մի աշխատություն։ Արդեն ապացուցված է, որ պալեոլիթը Հայաստանում ներկայացված է շելյան ժամա-

նակաշրջանի գործիքների հարուստ կոլեկցիայով, այսինքն Հայաստանի պալեոլիթյան կուլտուրան Սովետական Միության մեջ հայտնի դարձածներից հնագույնն է։ Հայաստանի պատմաբաններն ու հնագետները կազմակերպել են մի քանի դիսպուտներ և առանձին հարցերի քննարկումներ՝ աշխատելով Ի. Վ. Ստալինի աշխատության լույսի տակ լուծել իրենց հուզող հարցերը, նրանք նոր եռանդով ուսումնասիրում են մարքս-լենինյան ուսմունքը, ջանալով՝ խորապես ըմբռնել այն։

Ի. Վ. Ստալինը իրեն հատուկ հումորով սպանիչ քննադատության է ենթարկում մարքս-լենինյան ուսմունքի նկատմամբ տիրացուական, թալմուդիստական վերաբերմունք ցուցաբերողներին։

«Տիրացուներն ու թալմուդիստները մարքսիզմը, մարքսիզմի առանձին հետևություններն ու ֆորմուլաները դիտում են իբրև դոգմաների հավաքածու, որոնք «երբեք» չեն փոփոխվում, չնայած հասարակության զարգացման պայմանների փոփոխմանը։ Նրանք կարծում են, որ եթե սերտեն այդ հետևություններն ու ֆորմուլաները և սկսեն դրանք ծուռ ու մուռ մեջ բերել, ապա նրանք ի վիճակի կլինեն լուծելու ամեն մի հարց, հույս ունենալով, որ սերտած հետևություններն ու ֆորմուլաները նրանց պետք կգան բոլոր ժամանակների ու երկրների համար, կյանքի բոլոր դեպքերում։ Բայց այսպես կարող են մտածել միմիայն այնպիսի մարդիկ, որոնք տեսնում են մարքսիզմի տառը, բայց չեն տեսնում նրա էությունը, անգիր են անում մարքսիզմի հետևությունների ու ֆորմուլաների տեքստերը, բայց չեն հասկանում դրանց բովանդակությունը»։[1]

Մարքս-լենինյան ուսմունքի խորը ուսումնասիրությունն ու նրա էության ըմբռնումը հնարավորություն է ընձեռում պակաս թերություններով ու առավել արժանիքներով գիտական գործեր երևան բերել, օգնում գիտության բնագավառում խիզախել։

Ռիտական ստեղծագործական աշխատանքի ընթացքում մեր մշտական, բազմիցս փորձված ուղեցույցն ու զենքը պետք է հանդիսանան քննադատությունն ու ինքնաքննադատությունը, պայքարը սխալների ու թերությունների բացահայտման ու վերացման համար։ Այս կամ այն գիտնականի հեղինակությունը չպետք է արգելակի քննադատության ազատությունը։

---

[1] Ի. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 124—125։